

ՀՀ սփյուռքի նախարարության 2015թ ՀՀ պետական բյուջեով ֆինանսավորված ծախսերի վերաբերյալ

«ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվել են հետևյալ ծրագրերը.

1. «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի մասով» (բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 05) ծրագրով նախատեսվել է 292539.7 հազ. դրամ: Կատարվել է վերաբաշխում 3400.0 հազ.դրամի չափով և ճշտված պլանը կազմել է 289139.7 հազ.դրամ: Ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 263453.7 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմում է 25686.0 հազ. դրամ: Տնտեսումը պայմանավորված է թափուր աշխատատեղերի, մրցույթներում ներկայացված ցածր գներով, ինչպես նաև կապի և էլ. էներգիայի խնայողաբար օգտագործմամբ: Գումարը վերադարձվել է ՀՀ պետ.բյուջե: Նախորդ տարվա դրամարկղային ծախսը կազմել է 206952.1 հազ. դրամ: 2015 թվականի դրամարկղային ծախսը 2014 թվականի համեմատ աճել է 56501.6 հազ. դրամով, որը պայմանավորված է 2014 թվականի հուլիսի 1-ից պետական ծառայողների բազային աշխատավարձի և նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

2. «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի մասով» (բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 04) ծրագրով նախատեսվել է 93696.8 հազ. դրամ: Կատարվել է վերաբաշխում 600.0 հազ.դրամի չափով: Ճշտված պլանը կազմել է 93096.8 հազ. դրամ: Ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 86060.6 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 7036.2 հազ. դրամ: Տնտեսումը պայմանավորված է թափուր աշխատատեղերի, մրցույթներում ներկայացված ցածր գներով, ինչպես նաև կապի և էլ. էներգիայի խնայողաբար օգտագործմամբ: Գումարը վերադարձվել է ՀՀ պետ.բյուջե: Նախորդ տարվա դրամարկղային ծախսը կազմել է 63817.6 հազ. դրամ: 2015 թվականի դրամարկղային ծախսը 2014 թվականի համեմատ աճել է 22243.0 հազ. դրամով որը պայմանավորված է 2014 թվականի հուլիսի 1-ից պետական ծառայողների բազային աշխատավարձի և նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

3. «Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ» (բաժին 01, խումբ 01, դաս 03, ծրագիր 04) ծրագրով ճշտված պլանը կազմել է 9266.91 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 9266.9 հազ. դրամ: 2015 թվականի ընթացքում համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի ՆԿ-41-Ա, ՆԿ-63-Ա հրամանագրերի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 161-Ա, 213-Ա, 539-Ա որոշումների կազմակերպվել է 5 գործուղում: 2014 թվականի փաստացի կատարվել է 6779.8 հազ. դրամ դրամարկղային ծախս: 2015 թվականին ավել է կատարվել 2487.1 հազ. դրամով:

4. «Մշակութային միջոցառումների իրականացում» (բաժին 08, խումբ 02, դաս 05, ծրագիր 03) ծրագրով նախատեսվել է 261298.6 հազ. դրամ: Ճշտված պլանը կազմել է 261298.6 հազ. դրամ: Ֆինանսավորումը՝ 226297.8 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 216515.5 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է՝ 44783.1 հազ.դրամ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ միջոցառումների մի մասը իրականացվել է բարերարների և մասնակիցների հաշվին: Տնտեսված գումարը վերադարձվել է ՀՀ պետ.բյուջե: 2014 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 308098.6 հազ. դրամ: 2015 թվականի դրամարկղային ծախսը 2014 թվականի նկատմամբ նվազել է 91583.1 հազ. դրամով, որը պայմանավորված է «Իմ Հայաստան» փառատոնի անցկացմամբ, այն տեղի է ունենում 2 տարին մեկ անգամ:

- **Նպատակներն ու խնդիրները.**

Ծրագրի նպատակն է Հայ մշակույթի պահպանումը և տարածումը սփյուռքում, հայապահպանությունը: Ծրագրի շրջանակներում իրականացվում են մշակութային գործիչների այցելություններ համայնքներ, աջակցություն համայնքներին, գործուղումներ համայնքներ, մեր մեծերին նվիրված միջոցառումներ, համահայկական խորհրդաժողովների անցկացում, ցեղասպանության 100 ամյա տարելիցին ընդառաջ միջոցառումների կազմակերպում, սփյուռքի ուսուցիչների մրցանակաբաշխություն և այլն, թվով 13 միջոցառում:

- **Ծրագրում ընդգրկվել են**

1. **«Մեր մեծերը»** ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 4000.00 հազ. դրամ: Ճշտված գումարը կազմել է՝ 4000.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը՝ 3946.0 հազ.դրամ: Իրականացվել է 2015 թվականին ՀՀ սփյուռքի նախարարության կողմից «Մեր մեծեր» հռչակած՝ Դանիել Վարուժանի, Համաստեղի, Անդրանիկ Օզանյանի, Փանոս Թերլեմեզյանի, Մանուկ Աբեղյանի կենսագրության ու գործունեության մասին պատմող ֆիլմի ձեռք բերում, «Զորավար Անդրանիկի» ծննդյան 150-ամյակին նվիրված միջոցառում, «Մայրենի օրվան» նվիրված միջոցառումներ: 2014 թվականի ֆինանսավորման ծավալը ևս

կազմել է 4000.00 հազ.դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 3961.5 հազ. դրամ: 54.0 հազ.դրամ վերադարձվել է պետ. բյուջե:

2. **«ՀՀ-ում համահայկական խորհրդաժողովների անցկացում»** ծրագրի միջոցառման արժեքը 23000.00 հազ.դրամ է: Ճշտված պլանը կազմել է 23000.0 հազ. դրամ: Ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման և դրամարկղային ծախսը կազմել է 19060.9 հազ. դրամ: Միջոցառման նպատակն է ՀՀ-ում կազմակերպել և անցկացնել համահայկական խորհրդաժողովներ: Այս տարի իրականացվել է «Հայոց ցեղասպանության իրավական հիմնախնդիրներին նվիրված գիտաժողովի», «Հայկական առևտրաարդյունաբերական պալատների ներկայացուցիչների», «Արևմտահայերենի և արևելահայերենի մերձեցման խնդիրներ» թեմայով, «Սրտաբանների եվրակովկասյան 5-րդ» համաժողովների կազմակերպում: Ձեռք են բերվել գիտաժողովի մասնակիցների ավիատոմսերը և գնման մրցույթի հայտարարում «Ազդարարում»: 2014 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 26120.0 հազ. դրամ: 2015 թվականին 7059.1 հազ. դրամով պակաս քան, 2014 թվականին որը պայմանավորված է մասնակիցների քանակով: 3939.10 հազ. դրամ վերադարձվել է պետ. բյուջե:

3. **«Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառում»** ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 9000.00 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 9000.0 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 8640.0 հազ.դրամ: Տարբերությունը՝ 360.0 հազ.դրամ վերադարձվել է ՀՀ պետ. բյուջե: 2015 թվականի լրանում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Ծրագիրը նպատակ ունի միջոցառումների միջոցով հայկական ու համաշխարհային հանրությանը ուշադրությունը սեփականելու Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման համար:

- «100 տարի Արևմտյան Հայաստանի տարազների» ցուցադրության կազմակերպում
- «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված դասալսման» կազմակերպում
- «Ժամանակակից Թուրքիա» գիտաժողովի կազմակերպում
- «Նոր օսմանյան Թուրքիայի արտաքին քաղաքականության գաղափարներ» քննարկման կազմակերպում

2014 թվականին ծրագրի համար նախատեսված է եղել 9000.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է՝ 8612.0 հազ. դրամ, 388.0 հազ. դրամ վերադարձվել է պետ. բյուջե: 2015 թվականին դրամարկղային ծախսը 28.0 հազ. դրամ ավել է քան 2014 թվականին, որը պայմանավորված է վերը նշված հանգամանքներով:

4. «**Համահայկական մրցանակաբաշխություն**» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 8000.00 հազ. դրամ: Ճշտված պլանը կազմել է՝ 8000.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 7970.00 հազ. դրամ, որը կիրականացվի 2016 թվականին, 30 հազ. դրամ վերադարձվել է ՀՀ պետ բյուջե: Նպատակը սփյուռքում կատարվող աշխատանքների խրախուսման, մրցակցության մեջ ի հայտ եկած նվաճումների, ամենօրյա շնորհակալական աշխատանքի գնահատման, հայապահպանություն իրականացնելու գործում մեծ ավանդ ունենալու համար՝ խրախուսվում են սփյուռքի հայազգի մանկավարժները, մշակութային ոլորտի ուսուցիչները և այլ հայապահպանություն իրականացնող անձիք: 2014 թվականի ֆինանսավորման և դրամարկղային ծախսը կազմել է 8000 հազ. դրամ:

5. «**Աջակցություն համայնքների կայացմանը**» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1000 հազ. դրամ: Ճշտված պլանը՝ 1000.0 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 972.40 հազ. դրամ: 27.6 հազ. դրամ վերադարձվել է պետ. բյուջե: Ծրագրի շրջանակներում իրականացվել է հայկական խորհրդանիշերի պատրաստում /ՀՀ դրոշ, զինանշան, այբուբեն, հայրենասիրական երգերի սկավառակ, ՀՀ Նախագահի նկարը/ և տրամադրում սփյուռքյան կառույցներին և կազմակերպություններին: Հաշվետու ժամանակահատվածում ձեռք է բերվել «ՀՀ օրհներգ»- 17 հատ, «ՀՀ դրոշ» - 17 հատ, «Հայկական այբուբենի տառերը» - 17 հատ, «ՀՀ զինանշան» - 17 հատ, «ՀՀ սահմանադրություն» - 17 հատ, «Փաթեթավորման արկղ» - 17 հատ: 2014 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 972.4 հազ. դրամ:

6. «**Աշխատանք սփյուռքի համայնքների հետ**» ծրագրի իրականացման գումարը կազմել է 23000.00 հազ. դրամ: Ճշտված պլանը կազմել է՝ 23000.0 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 14515.9 հազ. դրամ: 8357.0 հազ. դրամ վերադարձվել է պետ. բյուջե: Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է՝

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի այցը՝ Բեյրութ /Լիբանանի Հանրապետություն/
- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի այցը՝ Բեյրութ /Լիբանանի Հանրապետություն/
- Մեթոդիստ Աստղիկ Բալայանի գործուղումը՝ Լոնդոն /Մեծ Բրիտանիա/
- ՀՀ սփյուռքի նախարարի այցը՝ Բուխարեստ /Ռումինիա/
- ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի Մերձավոր սփյուռքի հետ կապերի վարչության պետ Տ.Շազոյանի գործուղումը Թբիլիսի, Բաթումի /Վրաստան/
- ՀՀ սփյուռքի նախարարի խորհրդական Ս.Պետրոսյանի գործուղումը Թբիլիսի, Բաթումի /Վրաստան/

- Ռեժիսոր Վահան Ստեփանյանի այցը Եվրոպական երկրներ
- ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի Մերձավոր սփյուռքի հետ կապերի վարչության պետ Տ.Շագոյանի գործուղումը Թբիլիսի /Վրաստան/
- Նունե Եսայանի և իր խմբի Եվրոպական երկրներում հյուրախաղերի կազմակերպում՝ ճանդամ
- ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի Մերձավոր սփյուռքի հետ կապերի վարչության պետ Տ.Շագոյանի Ախալքալաքի, Նինոծմինդա /Վրաստան/
- ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի 9 անդամների այցը Թավրիզ /Իրանի ԻՀ/:
- Նունե Եսայանի և իր խմբի 4 անդամների ԱՄՆ դեսպանատան մուտքի արտոնագրի վճարներ և ավիատոմսի ձեռքբերում
- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի այցը՝ Ամստերդամ /Նիդեռլանդների Թագավորություն/
- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի այցը՝ Շվեդիայի Թագավորություն
- Բանասիրական գիտությունների դոկտոր Սուրեն Դանիելյանի համար ավիատոմսի ձեռքբերում՝ Թուրքիա
- Մշակույթի գործիչ Ա.Ասլանյանի ԱՄՆ դեսպանատան հարցազրույցի վճար և ԱՄՆ-ի ավիատոմսի ձեռք բերում:

2014 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 14168.3 հազ. դրամ: 2015 թվականի 347.6 հազ. դրամ պակաս քան 2014 թվականին, որը պայմանավորված է գործուղումների աշխարհագրությունից: Ծրագիրն իրականացել է 63%-ով:

7. «Կրթամշակութային աջակցություն հայ համայնքներին» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 16000.00 հազ. դրամ: Ճշտված պլանը կազմել է՝ 16000.0 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը՝ 8131.1 հազ. դրամ, տարբերությունը՝ 7868.9 հազ. դրամը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է մշակութային գործիչների՝ Զարուհի Բաբայանի, Համլետ Գևորգյանի, Միքայել Մալյանի, Աստղիկ Բալայանի, Մալխասյան Մուրադի, Ռուզաննա Ավետիքյանի այցելությունները տարածաշրջան: Անհատական ցուցահանդեսների կազմակերպում: 2014 թվականին դրամարկղային ծախսը կազմել է՝ 14007.3 հազ. դրամ: 2015 թվականին 5876.2 հազ. դրամ պակաս, քան 2014 թվականին, որը պայմանավորված է Լատինական Ամերիկա հայոց լեզվի վերապատրաստում իրականացնելու նպատակով ուսուցչի գործուղման հետ:

8. «Սփյուռքի հայ համայնքների ղեկավարների տարածաշրջանային հավաքներ Հայաստանում կամ սփյուռքում» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 10000.00 հազ. դրամ: Ճշտված պլանը կազմել է 10000.0 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է՝ 6220.0 հազ. դրամ: 3780.0 հազ. դրամ վերադարձվել է պետ բյուջե: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել և իրականացվել է Սփյուռքի հայ համայնքների տարածաշրջանային հավաքների կազմակերպում Հայաստանում ծառայությունների ձեռք բերում, Ազդարարում գնման մրցույթի հայտարարություն: 2014 թվականին դրամարկղային ծախսը կազմել է՝ 9940.0 հազ. դրամ: 2015 թվականին 3720.0 հազ. դրամ պակաս քան 2014 թվականին, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ մասնակիցներից ոմանք և բարերարները հոգացել են ծախսերի մի մասը:

9. «Սփյուռքահայերի ինտեգրման ծրագիր» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 11000.00 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 11000.0 հազ. դրամ: Դրամարկղային՝ ծախսը կազմել է 10880.0 հազ. դրամ: 120.0 հազ. դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Միջոցառման շրջանակներում իրականացվել է՝

- «Հալեպ-տազնապալի» օրեր ցուցահանդեսը
- Սփյուռքահայ արվեստագետներին նվիրված միջոցառում
- Սփյուռքահայ ուսանողների և աշակերտների համար միջոցառում
- Սփյուռքահայերի ինտեգրման միջոցառումների կազմակերպում
- Սփյուռքահայ ստեղծագործողների կայացման համար միջոցառումների կազմակերպում
- Գնման մրցույթի հայտարարում «Ազդարարում»

2014 թվականին դրամարկղային ծախսը կազմել է՝ 10900 հազ. դրամ: 2015 թվականին 20.0 հազ. դրամ պակաս, քան 2014 թվականին, որը պայմանավորված է ցածր գնային առաջարկությամբ:

10. «Հայկական սփյուռքի գիտական կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների ու տվյալների միասնական համակարգի ստեղծում» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 4000.0 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 4000.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 3952.7 հազ. դրամ: 47.3 հազ. դրամը վերադարձվել է պետ բյուջե: Ծրագրի նպատակն է համակարգի համալրումն ու սպասարկումը: Ծրագրի շրջանակներում վճարվել է աշխատավարձ մասնագետներին՝ 3607.2 հազ. դրամ, ինտերնետային կայքի անխափան աշխատանքի, սպասարկման, հանգուցային անվան գրանցման, մրցույթի հրավերի տպագրության ծառայությունների ձեռք բերման համար՝ 345.5 հազ. դրամ: 2014

թվականին դրամարկղային ծախսը կազմել է 3970.6 հազ.դրամ: 2015 թվականին 17.9 հազ.դրամ պակաս, քան 2014 թվականին, քանի որ ներկայացվել է ցածր գնային առաջարկ:

11. «ԱՊՀ հայ համայնքների կրթամշակութային զարգացում» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 26000.0 հազ. դրամ: Ճշտված պլանը՝ 26000.0 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը՝ 21163.7 հազ.դրամ: 4836.3 հազ. դրամ ետ է վերադարձվել ՀՀ պետական բյուջե: Ծրագրի շրջանակներում իրականացվել է՝

- Դրոշակի և քարտեզի ձեռք բերում
- ԱՊՀ երկրների հայկական կրթօջախների ուսուցիչների վերապատրաստում
- Աջակցություն ԱՊՀ հայ համայնքի տարածաշրջանի կրթական հաստատություններին և հայագիտական կենտրոններին
- Աջակցություն հայ համայնքի մշակութային խմբերին
- Երաժշտական համույթի այց տարածաշրջան
- Տարածաշրջանի հայ երտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների հավաք-հանդիպումների կազմակերպում
- Օպերատոր Ա.Անանյանի և Ա.Սահակյանի այցը Ղազախստան
- Երաժշտական համույթի այցը Կամչատկա

2014 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 24703.2 հազ. դրամ:

2015 թվականին 3539.5 հազ.դրամ պակաս քան 2014 թվականին պայմանավորված ներկայացված գնային առաջարկով:

12. «Սփյուռքյան կառույցների և նշանավոր անհատների ծրագրերի իրականացում Հայաստանում» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 24298.6 հազ. դրամ: Ճշտված պլանը՝ 24298.6 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է՝ 24090.0 հազ. դրամ: 208.6 հազ. դրամ վերադարձվել է պետ բյուջե: Ծրագրի շրջանակներում իրականացվել է՝

- Աջակցություն «Վերածնունդ» միջազգային մրցույթ փառատոն հասարակական կազմակերպության գործունեությանը,
- Սփյուռքահայ «Մեծերի» և/կամ Սփյուռքահայ կառույցների մեծարման միջոցառումների կազմակերպում
- Հայաստանում սփյուռքյան հայկական կազմակերպությունների հետ միջոցառումների կազմակերպման ծառայություններ
- Սփյուռքի նշանավոր անհատների միջոցառման կազմակերպման ծառայություններ
- Համայնքային օրեր միջոցառումների կազմակերպում

2014 թվականին միջոցառման արժեքը կազմել է 23855.0 հազ դրամ 2015 թվականին 235.0 հազ. դրամ ավել է, քան 2014 թվականին, որը պայմանավորված է ցածր գնային առաջարկով:

13. «Սփյուռք ամառային դպրոցի կազմակերպում» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 80000.0 հազ. դրամ: Ճշտված պլանը՝ 8000.0 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 65013.5 հազ. դրամ: 14986.5 հազ.դրամ վերադարձվել է պետ բյուջե, իսկ 2014 թվականին միջոցառման արժեքը կազմել է 40000.00 հազ դրամ, դրամարկղային ծախսը՝ 40000.0 հազ. դրամ: Ծրագրի նպատակն է իրականացնել 5 ուղղությամբ ամառային ուսուցողական դասնթացների կազմակերպում: Իրականացվել է «Ամառային դպրոցի» ուսուցիչների վերապատրաստում, հայոց լեզվի, պարուսույցների, երգի, երիտասարդ առաջնորդների, սփյուռքի լրագրողների դասնթացի կազմակերպում: Ծրագիրն իրականացվել է ամբողջությամբ: 2015 թվականին ծրագրի ֆինանսավորումը աճել է կրկնակի քան 2014 թվականին պայմանավորված մասնակիցների թվաքնակով և դասաժամերի ավելացմամբ:

5. «Տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացում» (բաժին 08, խումբ 02, դաս 05, ծրագիր 12) ծրագրով նախատեսվել է 20000.0 հազ. դրամ: Ճշտված պլանը և ֆինանսավորումը կազմել է 20000.0 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 19835.0 հազ.դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 165.0 հազ. դրամը ՀՀ պետական բյուջե է վերադարձվել: «Կոմիտաս Վարդապետ» փառատոնի շրջանակներում իրականացվել է՝

- Երևանում թատրոնի դահլիճ վարձակալում 3 անգամ՝ ապահովված համապատասխան սարքավորումներով, ձևավորված բնական ծաղիկներով, գելով լիցքավորված փուչիկներով
- Երևան քաղաքում /Կենտրոն համայնքում/ 100 մասնակիցների կեցություն նախաճաշով, միջոցառման մասնակիցների 4 օր ուղևորափոխադրում Երևան քաղաքում
- 4 օր 130 մասնակցի սննդի մատակարարում օրական 2 անգամ
- Պաստառների, հրավիրատոմսերի և ծրագիր-թերթոնների, հավաստագրերի համակարգչային ձևավորում, պատրաստում և տպագրություն
- Եռաբլուր այցելողների համար ծաղիկներ և ծաղկեպսակ՝ բնական ծաղիկներով
- Վճարվել է աշխատավարձ մասնագետներին՝ 8918.7 հազ.դրամ
- Վճարվել է հեռահաղորդակցման, գրասենյակային նյութերի և վառելանյութերի ձեռքբերման դիմաց՝ 1081.3 հազ. դրամ

2014 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 20000.0 հազ. դրամ: 2015 թվականի 165.0 հազ. դրամով պակաս, քան 2014 թվականին, որը պայմանավորված է գնումների արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության կողմից ներկայացված ցածր գնով:

- **Նպատակներն ու խնդիրները**

Ծրագրի նպատակն է տարածքային համագործակցության և մշակութային միջոցառումների իրականացումը, որոնց արդյունքում լուծվում է մի շարք հայապահպանական խնդիրներ: Մասնավորապես իրականացվում են համայնքների հետ համագործակցության ծրագրեր և միջոցառումներ:

6. «Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայություններ» (բաժին 08, խումբ 03, դաս 02, ծրագիր 12) ծրագրով նախատեսվել է 33036.40 հազ. դրամ, ճշտված պլանը և դրամարկղային ծախսը՝ 33036.4 հազ. դրամ: Նախորդ տարվա դրամարկղային ծախսը ևս կազմել է 33036.4 հազ. դրամ: Ծրագրերը իրականացվել են ամբողջությամբ և ընդգրկված են եղել հետևյալ միջոցառումները.

1. «Հայերն այսօր» էլեկտրոնային բազմալեզու օրաթերթի հրատարակում,
2. «Էլեկտրոնային գրադարանի համալրում»,
3. «Արևմտահայերենից արևելահայերեն և հակառակը փոխարկիչ» ծրագրի համալրում և սպասարկում:

Հաշվետու ժամանակահատվածում «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականում տեղադրվել է 17372 նյութ, որն իր մեջ ամփոփում է նորություններ, հոդվածներ, հարցազրույցներ, իսկ անհատներին նվիրված բաժնում Ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ, Սիրիահայությանը նվիրված նյութերը՝ արևելահայերեն, արևմտահայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով, իսկ էլեկտրոնային գրադարանի կայք էջում թվայնացվել և տեղադրվել է շուրջ 37500 էջ նյութ, 129 ամբողջական գիրք: Հայոց ցեղասպանություն բաժնում տեղադրվել է 20 նյութ, գեղարվեստական՝ 32, դասագրքեր՝ 3, հոգևոր՝ 12, մանկական՝ 3, պատմական 11, գիտական 25, համաշխարհային գրականություն՝ 22, ինչպես նաև՝ մշակութային և գրական նորություններ, տեսանյութեր և այլն: Կայքում ստեղծվել են նաև ռուսերեն, անգլերեն, արևելահայերեն, արևմտահայերեն բաժիններ և բոլոր գրքերն այժմ դասակարգվում են ըստ լեզուների: Բացի թվայնացված գրքերից, կայքում տեղադրվում են նաև տեսանյութեր: Կայքում տեղադրված նյութերը հրապարակվում են նաև գրադարանի ֆեյսբուքյան էջում: Կայքում տեղադրված է շուրջ 750 նյութ:

7. «Ուսումնական և հանրամատչելի գրականության հավաքագրում և առաքում սփյուռքի համայնքներին» (բաժին 08, խումբ 03, դաս 02, ծրագիր 13) ծրագրի վերաբերյալ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 10000.0 հազ. դրամ. ճշտված պլանը, ֆինանսավորումը, դրամարկղային ծախսը կազմել է 10000.0 հազ. դրամ: 2014 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 10000.0 հազ. դրամ:

- **Նպատակները.**

Ծրագրի նպատակն է ուսումնական, ուսումնամեթոդական գրականության և ուսումնաօժանդակ նյութերի և ՀՀ խորհրդանիշերի, սփյուռքի հայ համայնքներին և հայկական դպրոցներին առաքում:

- **Խնդիրները.**

Սփյուռքի հայկական կրթօջախներում այսօր կա ուսումնական և հանրամատչելի գրականության պակաս:

2015 թվականին ծրագրի շրջանակներում մոտ 285 ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների առաքվել է ավելի քան 50000 կտոր գրականություն, իսկ 2014 թվականի 41258 կտոր գրականություն: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ «Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական և օժանդակ նյութերի մշակում և տրամադրում» ծրագրի շրջանակներում լրացուցիչ 5000.0 հազ. դրամի պայմանագիր է կնքվել «ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-հետ, որն ամբողջությամբ իրականացվել է:

8. «Սփյուռքի երիտասարդների Հայաստան պարբերական այցելություններ «ԱՐԻ ՏՈՒՆ» (բաժին 08, խումբ 04, դաս 01, ծրագիր 03) ծրագրի վերաբերյալ

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 100000.0 հազ.դրամ: Ճշտված պլանը՝ 100000.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 93507.2 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 6492.8 հազ.դրամ է, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ բարերարները հոգացել են մասնակիցներից մի քանիսի ճամբարի և էքսկուրսիաների ֆինանսավորման խնդիրները: 2014 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 84368.7 հազ. դրամ: 2015 թվականին դրամարկղային ծախսը 9138.5 հազ. դրամով ավել է, քան 2014 թվականին, որը պայմանավորված է մասնակիցների ավելացմամբ: 2015 թվականի մասնակցել է 1365 երիտասարդներ, իսկ 2014 թվականին 1300 երիտասարդ:

- **Նպատակները.**

Ծրագրի նպատակն է սփյուռքում բնակվող 13-20 տարեկան հայազգի երիտասարդների համար կազմակերպել և իրականացնել 14-օրյա ճանաչողական շրջայցեր հայրենիքում: Երիտասարդները 10 օր բնակվում են հայ ընտանիքներում 4-օր ճամբարում: Մասնակցում են թվով 9 ճանաչողական շրջայցերի /Սևան, Էջմիածին, Նորավանք, Խոր Վիրապ և այլն/ ինչպես նաև ճամբարում մասնակցում են հայոց լեզվի, հայկական երգի և պարի դասերին: Գլխավոր նպատակներից է նաև սփյուռքում բնակվող հայազգի երիտասարդների հայապահպանությունը և ոգին:

- **Խնդիրները.**

Ծրագրի իրականացման արդյունքում լուծվում են մի շարք խնդիրներ: Երիտասարդներին ծանոթացնել հայկական մշակույթին, հայ ընտանիքին, ինչպես նաև ծրագրի մասնակիցներին ավելի մոտեցնել հայրենիքին:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են՝

Մասնակիցներին պարագաների տրամադրում, տպագրական աշխատանքներ, մասնակիցներին դիմավորում և ճանապարհում, շրջայցեր, սննդի սպասարկում, ծաղիկների գնում և առաքում, դահլիճների վարձակալություն, տեսանկարահանում և լուսանկարահանում, փակման հանդիսավոր արարողություն, կեցություն ճամբարում, համակարգող փորձագետներին աշխատավարձի տրամադրում:

9. «Հայաստան–Սփյուռք գործակցություն թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում, ձեռքբերում և բազմացում» (բաժին 08, խումբ 03, դաս 01, ծրագիր 09) ծրագրի վերաբերյալ

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 52600.00 հազ.դրամ: Ծշտված պլանը՝ 52600.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է՝ 51750.0 հազ.դրամ: Ծշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը 850.0 հազ.դրամը վերադարձվել է պետ բյուջե: 2014 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 49800.0 հազ. դրամ: 2015 թվականին 1950.0 հազ.դրամով ավել է, քան 2014 թվականի, որը պայմանավորված է 2/երկու/ հեռուստահաղորդումների ավելացմամբ:

- **Նպատակները.**

Ծրագրի նպատակն է պահպանել և զարգացնել կապերը հայրենիք-սփյուռք, սփյուռք-սփյուռք և սփյուռքում ավելի հասանելի դարձնել սփյուռքի նախարարության գործունեությունը, ավելի մանրամասն ներկայացնել իրականացվող ծրագրերն ու դրանց նպատակները, ինչպես նաև համայնքներում տարածել Հայաստանն ու հայկական մշակույթը քարոզող հաղորդումներ և հոլովակներ:

- **Խնդիրները.**

Ծրագրի իրականացման արդյունքում հայկական հեռուստատեսությամբ և հայկական համայնքներում կցուցադրվեն հայապահպանություն քարոզող և Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող հեռուստահաղորդումներ, հոլովակներ և ֆիլմեր:

Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- «Սփյուռքի ժամ հեռուստահաղորդաշար» - ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 10000.00 հազ. դրամ /40 հեռուստահաղորդում/:
- «Մերոնք» - հեռուստանախագծի ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 17300.00 հազ. դրամ /72 հաղորդում/:
- «Հայ Սփյուռք» - ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 4000.00 հազ. դրամ /10 հաղորդում/:
- «Արմնյուզ»- հեռուստահաղորդման պատրաստման համար ֆինանսավորման ծավալը կազմել է 6000.00 հազ. դրամ /20 հաղորդում/:
- «Տառաճանաչություն»- ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 2000.00 հազ.դրամ /34 հաղորդաշար/
- Տեղեկատվական նյութի տեղադրում «Առավոտ» օրաթերթում ֆինանսավորման ծավալը կազմել է 800.0 հազ.դրամ /10 նյութ/
- «Ժառանգորդի իրավունքով» ֆինանսավորման ծավալը կազմել է 4000.0 հազ դրամ /պրոմո տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում 16հատ/
- Տեղեկատվական նյութերի տեղադրում «news.am» կայքում ֆինանսավորման ծավալը կազմել է 600.0 հազ դրամ /10 նյութ/
- Սփյուռքի համայնքների վերաբերյալ տեսաֆիլմի պատրաստում- ֆինանսավորման ծավալը կազմել է 2750.0հազ.դրամ
- Տեղեկատվական նյութերի տրամադրում «Ավանգարդ» թերթում- ֆինանսավորման ծավալը կազմել է 500.0 հազ դրամ /10 նյութ/
- Տեղեկատվական նյութերի տեղադրում «Թերթ.am» ֆինանսավորման ծավալը կազմել է 600.0 հազ դրամ
- Տեղեկատվական նյութերի պատրաստում և տեղադրում «Գոլոս Արմենիա» թերթում ֆինանսավորման ծավալը կազմել է 1500.0 հազ դրամ /30 նյութ/
- «Տեսանկյուն» հաղորդաշարի պատրաստում, լուսաբանում «Գևորգ Մեդիա»- ում ֆինանսավորման ծավալը կազմել է 1000.0 հազ. դրամ
- «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ֆինանսավորման ծավալը կազմել է 600.0 հազ. դրամ /նյութերի պատրաստում/
- Մրցույթի հրավերի տպագրություն «Ազդարար»-ում 100.0 հազ. դրամ:

10. «Գիտական և գիտատեխնիկական հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» (բաժին 01, խումբ 04, դաս 01, ծրագիր 02) ծրագրի շրջանակներում պետական աջակցություն

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատվել է 14400.0 հազ. դրամ, որից ճշտված պլանը՝ 14400.հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 14400.0 հազ. դրամ: 2014 թվականի դրամարկղային ծախսը կազմել է նույնպես 14400.0հազ.դրամ: Ծրագիրն իրականացվել է ամբողջությամբ:

• Նպատակներն ու խնդիրները

Ծրագրի իրականացման նպատակն է Պետական պատվերի միջոցով, մասնագիտացված կազմակերպությունների կողմից իրականացնել սփյուռքին վերաբերվող 12 թեմաների գիտական հետազոտությունների պատվեր:

2015 թվականին ծրագրի շրջանակներում պատվիրվել են թվով 12 գիտական հետազոտություններ հետևյալ կազմակերպություններին.

1. «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ - ին «Գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործառող Կ ճյուղի բարբառների առնչությունները» ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

2. «ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ - ին, «Գրական սփյուռք 2015» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

3. «Նորավանք» գիտական հիմնադրամին, «Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և երկրորդ հանրապետությունը» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին-ին, «Թուրքիայի հակահայկական քաղաքականությունը» «Վիգեն Քոչարյանի Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում» գրքի անգլերեն տարբերակի մշակում և տպագրություն գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 2400.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

5. «ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ին, «Արևմտահայերեն առցանց որոնողական համակարգի ստեղծում»

գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

6. «ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ» ՊՈԱԿ-ին, «Հայոց ցեղասպանության աշխարհաքաղաքական հիմքերը, Հայկական հարցի էվոլյուցիա» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

7. «ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին «Հայոց ցեղասպանությունը և նյութական հատուցման խնդիրը» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

8. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան «Ամբերդ» հետազոտական կենտրոն «Սփյուռքի ներդրումները ՀՀ տնտեսության մեջ. զարգացման հեռանկարներ» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

9. «Վերադարձ Հայաստան» հիմնադրամ «Հայրենադարձների փորձն ու ինտեգրումը Հայաստանում. խոչնդոտներ և հնարավորություններ» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

10. «ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին «Հայերի ունեզրկման գործնառն Օսմանյան կայսրությունում և Քեմալական Թուրքիայում» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

11. Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն «Սփյուռքահայերի սոցիալ-մշակութային կարիքների ուսումնասիրում» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.00 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

11. «Սփյուռք տարեգրքի պարբերականի հրատարակում» ծրագրի վերաբերյալ Բաժին 08, Խումբ 03, Դաս 02, Ծրագիր 14

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով հաստատվել է 8200.00 հազ. դրամ: Ճշտված պլանը՝ 8200.0 հազ. դրամ է, իսկ ֆինանսավորումը, դրամարկղային ծախսը կազմել է 7761.6 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է՝ 438.4 հազ. դրամ: Գնման մրցույթում հաղթող

կազմակերպությունը նախատեսվածից ավելի ցածր գնային առաջարկ է ներկայացրել և տնտեսված գումարը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: 2014 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 7893.6 հազ. դրամ: 2015 թվականին 132.0 հազ. դրամով պակաս է, քան 2014 թվականին, որը պայմանավորված է ներկայացված ցածր գնով:

- **Նպատակը**

Տարեգրքի նպատակն է արժևորել, գրի առնել, լրացնել և ամբողջական դարձնել սփյուռքի հայ համայնքների գործունեությունը, Հայաստան-Սփյուռք գործակցության ոլորտում իրականացվող ծրագրերը և ձեռնարկները:

Տարեգիրքը կարող է հիմք հանդիսանալ էական քայլեր իրականացնելու Սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների բարելավման և տվյալների միասնական համակարգի ստեղծման ուղղությամբ, համապարփակ տեղեկատվություն տարածել տարբեր երկրներում գործող հայկական համայնքների մասին:

Սփյուռք-Սփյուռք և Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդումը, աշխարհասփյուռ հայերի համագործակցության հնարավորությունների ընդլայնումը և միջհամայնքային կապերի սերտացումն այսօր դիտարկվում է, որպես գերակա խնդիր:

Տարեգրքի միջոցով լուսաբանվում է ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից տարվա ընթացքում Սփյուռքի հետ իրականացված ծրագրերի, համահայկական կազմակերպությունների և հոգևոր կառույցների ազգապահպան ձեռնարկները հասանելի դարձնելը աշխարհասփյուռ հայությանը:

12. «Հայրենիք Սփյուռք գործակցության ծրագրերի իրականացում» ծրագրի վերաբերյալ Բաժին 08, Խումբ 02, Դաս 04, Ծրագիր 04

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեյով հաստատվել է 35417.3 հազ. դրամ, ճշտված պլանը, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 35417.3 հազ.դրամ: 2014 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 34455.6 հազ. դրամ: 2015 թվականի և 2014 թվականի դրամարկղային ծախսի տարբերությունը կազմում է 961.7 հազ. դրամ: Աճը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի ավելացմամբ:

Նպատակը

Հայաստան-սփյուռք գործակցության վերաբերյալ տեղեկատվական վերլուծական նյութերի պատրաստում և տարածում, համահայկական լրատվական ռեսուրսների

(համահայկական կայքերի, տեղեկագրերի, հեռուստատեսային լրատվական հաղորդումների, հեռուստակամուրջների և այլն) ստեղծում:

13. «Պետական հիմնարկների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրի վերաբերյալ Բաժին 10, Խումբ 09, Դաս 02, Ծրագիր 03

Նշված ծրագրի ճշտված պլանը կազմել է 6248.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը՝ 6116.0 հազ.դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմում է՝ 132.0 հազ.դրամ, որը պայմանավորված է սոց. փաթեթի շահառուների քանակով: Գումարը ետ է վերադարձվել ՀՀ պետ բյուջե: 2014 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 11546.5 հազ.դրամ: 2015 թվականին 5430.5 հազ.դրամով պակաս, քան 2014 թվականին՝ պայմանավորված առողջապահական ծառայությունների բաղադրիչը ՀՀ առողջապահության նախարարությանը փոխանցելու հանգամանքով:

14. «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» Բաժին 11, Խումբ 01, Դաս 01, Ծրագիր 01

2015 թվականին հատկացվել է 24656.0 հազ.դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 24656 հազ.դրամ: 2014 թվականին պահուստային ֆոնդից հատկացվել՝ 183340 հազ. դրամ:

2015 թվականի ընթացքում համաձայն Համաձայն ՀՀ կառավարության 22.10.2015 թվականի թիվ 1244-Ն որոշմամբ «Նվիրաբերություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով 24656.0 հազ.դրամ գումար է հատկացվել «Սիրիահայ հիմնախնդիրները համակարգող» հասարակական կազմակերպությանը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների սիրիահայ ուսանողներին 2015/2016 ուսումնական տարվա կրթաթոշակ հատկացնելու նպատակով:

15. «Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական և օժանդակ նյութերի մշակում և տրամադրում» Բաժին 09, Խումբ 06, Դաս 01, Ծրագիր 18

ՀՀ պետական բյուջեով հաստատվել է 100000.0 հազ. դրամ: Ճշտված պլանը՝ 100000.0 հազ. դրամ: Ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 99822.6 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 177.4 հազ. դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: 2014 թվականին դրամարկղային ծախսը կազմել է՝ 79414.3 հազ. դրամ: 2015 թվականին 20408.3 հազ. դրամով ավել է եղել, քան 2014 թվականին, որը պայմանավորված է գրքերի քանակի ավելացմամբ:

- **Ծրագրի նպատակն է՝**

ա) աջակցել սփյուռքահայության լեզվամշակութային ուժացման դեմ պայքարին, հայեցի կրթության ու դաստիարակության, հայ ինքնության ճանաչմանը, ազգային ինքնագիտակցության ձևավորմանը, Սփյուռքի հայապահպանության ծրագրերի իրականացմանը,

բ) նպաստել համայնքներում կրթական ծրագրերի իրականացմանը, աջակցել կրթօջախներում ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու որակի բարելավմանը:

16. «Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպում, գերեզմանի բարեկարգման, մահարձանի և հուշատախտակի պատրաստման ու տեղադրման աշխատանքներին աջակցություն» Բաժին 10, Խումբ 03, Դաս 01, Ծրագիր 03

Նշված ծրագրով նախատեսվել է 1415.7 հազ.դրամ: Ճշտված պլանը, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է՝ 1415.7 հազ.դրամ:

• Նպատակը

Համաձայն ՀՀ վարչապետի 30 սեպտեմբերի 2015 թվականի թիվ 881-Ա որոշման՝

Սփյուռքահայ գործարար, հասարակական գործիչ, բարերար Վահագն Հովնանյանի հուղարկավորության հետ կապված ծախսերը փոխհատուցելու համար հատկացվել է վերը նշված գումարը:

**ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար
Ֆ. Զաքարյան**